



ՀԱՅԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ*

Պատմական աղբյուրների վկայությամբ հայերը Միջին Ասիայում ապրել են դեռևս հնագույն ժամանակներից: 19-րդ դարի կեսերին երկրամասի ընդհանուր զարգացման հետևանքով ուժեղացավ հայերի հոսքը Միջին Ասիա: Տնտեսական գործունեության բավական լայն հնարավորություն գտնելով, նրանք սկսեցին հիմնվել քաղաքներում:

Հայերը սկզբնապես Միջին Ասիայի երկրամաս են գաղթել Զանգեզուրից և Ղարաբաղից, իսկ հետագայում, հայկական կոտորածների տարիներին (1890—1915 թթ.), նաև Արևմտյան Հայաստանից:

Հայերի մեծ մասը ապրում էր Աշխաբադում, Մերվում, Տաշքենդում, Սամարղանդում, Բոքսանդում, Անդիջանում, Կրասնովոդսկում և Կզըլ-Արվաթում: Այդ քաղաքներում հայերի կենտրոնացումը բացատրվում է այն փաստով, որ այնտեղ կատարվում էր աշխույժ առևտուր, կառուցվում էին կայարաններ, կամուրջներ և այլ շինություններ:

Սկզբնական շրջանում հայերը զբաղվում էին առևտրական գործունեությամբ և շինարարական աշխատանքներով: Թուրքեստանի երկրամասի տնտեսական զարգացման, երկաթուղու շահագործման, հանքային հարստությունների հայտնաբերման, գյուղատնտեսության և հատկապես բամբակագործության զարգացման հետ միասին ընդարձակվեց հայերի տնտեսական գործունեության ոլորտը:

Թուրքեստանի երկրամասի համար կարևոր նշանակություն ուներ մավթի, քարածխի և աղի հանքերի մշակումն ու ար-

տահանումը: Անցյալ դարի 90-ական թվականներին հայերը ձեռնամուխ եղան այդ կարևոր հանածոների արդյունահանմանը: Աշխաբադում մավթի արդյունահանության գործով զբաղվում էին Տեր-Հարությունովը, Պարոնյանը և Գյուլմագարովը, իսկ Կրասնովոդսկում՝ Մխիթարյանը, Բաքալանը և ուրիշներ: Աղի արդյունահանությամբ էր զբաղվում Տեր-Հովհաննեսովը: Աստիճանաբար սկսեցին կառուցվել ձեռնարկություններ, որտեղ աշխատում էին հայ լավագույն մասնագետներն ու արհեստավորները:

Հայերը Միջին Ասիայում զբաղվում էին նաև գյուղատնտեսությամբ: Մեծ նշանակություն ուներ բամբակագործությունը: Ընդարձակածավալ բամբակի դաշտեր ուներ Ավակովը, որտեղից ստանում էր մեծ քանակությամբ բարձրորակ բամբակի հումք: Տեր-Ավանեսովը Անդրկասպյան երկրամասի մի շարք շրջաններ ապահովում էր մավ: Հովսեփ Թումանովը Անդիջանի գավառում հիմնել էր մետաքսի բոծոժների անձեցման և բազմացման կենտրոն և զբաղվում էր շերամի սերմի մթերմամբ: Բարձր բերքի և որակի համար միջազգային տոնավաճառներում նա արժանացել էր մրցանակների:

Առևտուրը Միջին Ասիայում կյանքի կարևորագույն լծակն էր: Այդ առաքարեզում հայերը ակնառու դեր էին կատարում: Նրանք Անդրկովկաս, Կենտրոնական Ռուսաստան, Իրան և Աֆղանստան էին արտահանում աղ, չոր մրգեր, բուրդ, գորգեր և բամբակ, իսկ ներմուծում էին մավթամթերքներ, անտառանյութ և գործարանային ապրանքներ:

Հայերը ապրելով Միջին Ասիայի երկրամասում, աշխատել են պահպանել իրենց ինքնատիպ մշակույթը, հոգևոր կյանքը,

* Ըստ Արկադի Գրիգորյանցի «Հայերը Միջին Ասիայում» (XIX դ. երկրորդ կես, 1917 թ.), Երևան, 1984 թ. (ռուսերեն):

կենցաղն ու քարքերը: Օտարության մեջ գտնվելով, հայերը ստեղծել են լուսավորության և հոգևոր կյանքի կենտրոններ, ճարտարապետական և գրական հուշարձաններ, հասարակական և քարեգործական ընկերություններ: Ջրաղվել են ման գիտությամբ և արվեստով: Միևնույն ժամանակ, իրենց կապերը երբեք չեն խզել Հայաստանի հետ:

Միջին Ասիայում հայկական եկեղեցիները հիմնադրվել են առաջին հայ բնակիչների տեղափոխվելու ժամանակից: Անդրկասպյան երկրամասում դեռևս 1891 թ. հայկական եկեղեցիներ են կառուցվել Մերվում, Աշխաբադում և Կզըլ-Արվաթում: Էջմիածնի և Ծամախիի հոգևոր թեմերի ղեկավարությունը անմիջական կապեր է հաստատել և իր ներկայացուցիչներն է ուղարկել Միջին Ասիայի հայկական եկեղեցիները: Էջմիածնի սինոդը Թուրքեստանի երկրամասում հայկական եկեղեցիներ կառուցելու հարցում գործոն մասնակցություն է ունեցել:

Հայկական դպրոցներ ունենալու հարցը դրվել է հայերի Թուրքեստան տեղափոխվելու առաջին օրերից: Սկզբնական շրջանում ստեղծվել են հայկական եկեղեցական-ծխական դպրոցներ: 20-րդ դարի ըսկզբին Միջին Ասիայում արդեն գործում էին 8 հայկական ծխական դպրոցներ:

Թուրքեստանում հայերի վերաբնակվելու նախնական շրջանում եկեղեցին նշանակալից դեր է խաղացել: Զգուել է միավորել տարբեր վայրերում բնակություն հաստատած հայերին: Որոշ դեպքերում եկեղեցին կարողացել է կարգավորել ճորաբնակ հայերին աշխատանքով ապահովելու հարցը: Եկեղեցին Միջին Ասիայի երկրամասում բնակություն հաստատած հայերի պաշտոնական ներկայացուցիչն է եղել:

20-րդ դարի սկզբին Միջին Ասիայի երկրամասում սկսեց զարգանալ հայկական թատրոնն ու երաժշտությունը: Հայերեն լեզվով բեմական արվեստի ասպարեզում կատարված աշխատանքների մասին առաջին վկայությունը վերաբերում է 1900 թ., երբ հյուրախաղերի նպատակով Աշխաբադ էին եկել դերասաններ Ազնիվ և Անդրանիկ Սողոմոնյանները: Աշխաբադի հայ թատերասերների մասնակցությամբ նրանց առաջին ելույթները կայացան ազգային ժողովի ամառային դահլիճում, հայ հասարակության կողմից ջերմ ընդունելություն գնելով: Սողոմոնյանները հայկական քարեգործական ընկերության օգտին հայերեն

լեզվով բեմադրեցին «Վարդան Մամիկոնյան» պատմական ողբերգությունը և շատ այլ ներկայացումներ: Ամեն տարի Կովկասից Թուրքեստան էին ժամանում հայ արվեստի գործիչները: Իր թատերախմբով Աշխաբադ էր գալիս նաև հայ անվանի դերասան Ա. Վրույրը: Հայկական քարեգործական ընկերության օգտին կազմակերպվում էին երաժշտական երեկոներ: Բաքվի հայկական մշակութային ընկերության աջակցությամբ Անդրկասպյան երկրամաս են մեկնել համալսարան դերասաններ Հովհաննես Արելյանի, Սիրանույշի և Արմեն Արմենյանի ղեկավարած հայկական թատերախմբի դերասանները: Ելույթներ են ունեցել Կրասնովոդսկում, Աշխաբադում և Մերվում: Հայերեն լեզվով բեմադրված ներկայացումները ջերմ ընդունելություն են գտել հանդիսականների կողմից: Մամուլը բարձր է գնահատել հայ դերասանների զեղեցիկ և հուզիչ խաղը: Հատկապես նշել է Սիրանույշի և Հովհաննես Արելյանի վարպետությունը:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանից Միջին Ասիայի երկրամաս են տեղափոխվել կոտորածներից փրկված բազմաթիվ հայ ընտանիքներ: Նրանց ապաստանելու, բժշկական օգնություն ցուցաբերելու հարցում Անդրկասպյան երկրամասի հայերը մեծ աշխատանքներ են կատարել:

Գաղթական հայերին օգնության ձեռք մեկնեցին Անդրկասպյան երկրամասի հայկական քաղաքային ընկերությունները: 1901 թ. Սուսաննա Մամիկոնյանի նախաձեռնությամբ կայացավ Աշխաբադի հայկական քարեգործական ընկերության առաջին նիստը: Աշխաբադի հայ կանանց քարեգործական ընկերությունը Արևմտյան Հայաստանից Անդրկասպյան երկրամաս գաղթած հայ ընտանիքներին նյութական և բժշկական օգնություն ցույց տվեց: Օգնությունը կազմակերպվում էր Աշխաբադում և երկրամասի այլ քաղաքներում բնակվող հայերի նվիրատվության և հանգանակության միջոցներով: Աշխաբադի հայ կանանց քարեգործական ընկերության ջանքերով հայ երեխաների համար մանկապարտեզ բացվեց: Բարեգործական ընկերություններ ստեղծվեցին նաև Սամարղանդում, Բոքսանդում և այլ քաղաքներում:

Այսպիսով Միջին Ասիայում հայերը իրենց զգալի ավանդն են ներմուծել երկրամասի տնտեսական և մշակութային առաջընթացին: